ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ
ՁԵՐԲԱԿԱԼՎԱԾ ԱՆՁԱՆՑ ՊԱՀԵԼՈՒ ՎԱՅՐԵՐՈՒՄ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆ
ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԴԻՏՈՐԴԱԿԱՆ ԽՈՒՄԲ

№ 2621/1423

03.07.2014թվ.

ՀՀ Ոստիկանության պետ,
գեներալ-լեյտենանտ
պարոն՝ Վ. Գասպարյանին

Հարգելի պարոն Գասպարյան,

Սույն թվականի հունիս ամսին Դիտորդական խումբը այցելություն էր կատարել ոստիկանության Տավուշի ՄՎ Տավուշի ՁՊՎ և արձանագրել էր.

ՀՀ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՕՏԵՍ
ՄՏԻՑ № 9820
07 07 2014 թ.

1. Դիտորդական խումբը խնդրեց, որպեսզի տրամադրեն սննդի պայմանագիրը և վերջին մի քանի ձերբակալված անձանց սնունդ տրամադրելու վերաբերյալ սննդի կետի կողմից տրամադրված կտրոնները: Ոչ մի միջոց չձեռնարկվեց, միայն մեկնաբանեցին, որ նշված թղթերը գտնվում են հաշվապահի մոտ, իսկ նա տեղում չէ:

ՀՀ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ՏԵՍՉԱԿԱՆԻ ԴԻՏՈՐԴԱԿԱՆ ԽՈՒՄԲԻՆ
ՄՏԻՑ թիվ 5332
«07» 07 2014 թ.

2. 2-րդ խցի ջրի ծորակը չէր գործում:

3. Միաժամանակ Դիտորդական խմբին չտրամադրվեց իրազեկումները՝ ձերբակալվածի տեղաշարժի վերաբերյալ հեռախոսազանգի միջոցով նրա ընտրած անձին տեղյակ պահելու, պարզաբանեցին, որ նրանց անձնական գործի հետ տեղափոխվում է ՔԿՀ: Խնդրում ենք պարզաբանել, թե ինչ իրավական հիմքով է իրազեկման վերաբերյալ տեղեկանքները անձի հետ տեղափոխվում ՔԿՀ:

Տրամադրեցին միայն մեկ իրազեկում, որը լրացված էր խախտումներով, այն է տվյալ իրազեկման մեջ բաց է թողնված հեռախոսահամարի տեղը, բայց նշված է, որ հեռախոսահամարով տեղյակ ենք պահել հորը, որ որդին x օրը, x ժամին գտնվում է Տավուշի ՁՊՎ-ում / *փաստը հաստատող լուսանկար – 1/*

4. Ուսումնասիրությունների արդյունքում պարզվեց, որ Նարեկ Մաղյանը և Դավիթ Հովհաննիսյանը ձերբակալվել են 18.06.2014թ-ին: 20.06.2014թ-ին քննիչի կողմից

ՀՀ ք.Երևան 0002,Դեմիրճյան 29-1ա
www.policemonitoring.org
Հեռ./ֆաքս: (+374 10) 56 87 42
E-mail: info@policemonitoring.org

ներկայացվել է որոշում, որով պահանջել է, որպեսզի կալանավոր Ն. Մաղյանին 20.06.2014թ-ից մինչև 23.06.2014թ-ը ընդունեն և պահեն Տավուշի ՔՊՎ-ում, իսկ կալանավոր Դ. Հովհաննիսյանին 20.06.2014թ-ից մինչև 23.06.2014թ-ը պահեն ոստիկանության Իջևանի ՔՊՎ-ում: Որոշման 2-րդ կետով կատարման համար օրինակները տրամադրվել է ոստիկանության Տավուշի և Իջևանի բաժնի պետերին: /*փաստը հաստատող լուսանկար – 2*/: Արդյունքում՝ Դ. Հովհաննիսյանը չի տեղափոխվել Իջևանի բաժին և 18.06.2014թ-ի ժամը 11.30-ից մինչև 23.06.2014թ-ը ժամը 12.25-ը պահվել է Տավուշի ՔՊՎ-ում, որի արդյունքում՝ 21.06.2014թ-ի ժամը 11.30-ից մինչև 23.06.2014թ-ի ժամը 12.25-ը Դ. Հովհաննիսյանը առանց հիմնավոր փաստաթղթի պահվել է Տավուշի ՔՊՎ-ում: / *փաստը հաստատող լուսանկար – 3*/

5. «Ձերբակալված անձանց բուժօգնության կամ բուժզննության» գրանցամատյանը ուսումնասիրելուց արձանագրվեց, որ Դավիթ Հրանտի Հովհաննիսյանին չեն ենթարկել բուժզննության, իսկ Մխիթար Մխիթարյանի վերաբերյալ լրացված է միայն «հիվանդություններ չի հայտնաբերվել» բայց նշված չէ, թե ում կողմից է զննություն իրականացվել: / *փաստը հաստատող լուսանկար – 4*/

6. Միաժամանակ արձանագրվել է, որ ՔՊՎ-ում առկա որոշ փաստաթղթեր կրում են ձևական բնույթ: Օրինակ՝ Մխիթար Մխիթարյանի խուզարկության արձանագրության մեջ ժամը նշված չէ: / *փաստը հաստատող լուսանկար – 5*/

Այսպիսով խնդրում ենք տալ մեկնաբանություն ներկայացվածի վերաբերյալ:

Հարգանքներով՝

ՀՀ ոստիկանության համակարգի ձերբակալված անձանց պահելու վայրերում վերահսկողություն իրականացնող հասարակական Դիտորդական խմբի նախագահ՝ Հ. Սահակյան

ՀՀ ք.Երևան 0002,Դեմիրճյան 29-1ա
www.policemonitoring.org
Հեռ./ֆաքս: (+374 10) 56 87 42
E-mail: info@policemonitoring.org

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՇՏԱԲ

375025, ք. Երևան, Նալբանդյան 130 հեռ. 59-65-94

N 2/2-1-_____ <<____>> _____ 2014թ.

2/2-1-1809
24.07.14թ

Ձեր 03.07.2014թ. թիվ 2621/1423 գր.

ՀՀ ոստիկանության համակարգի ձերբակալվածներին պահելու վայրերում հասարակական դիտորդների խմբի նախագահ Հասմիկ Սահակյանին

Հարգելի տիկին Սահակյան.

Հայտնվում է, որ դիտորդների խմբի կողմից ս/թ հունիս ամսին ՀՀ ոստիկանության Տավուշի մարզային վարչության Տավուշի բաժնի ձերբակալվածներին պահելու վայր կատարած այցելության ընթացքում արձանագրված թերություններն ու խախտումներն ուսումնասիրվել են ՀՀ ոստիկանության շտաբում և Տավուշի մարզային վարչությունում, որի կապակցությամբ տրվում են հետևյալ մեկնաբանությունները.

1. Ոստիկանության Տավուշի բաժնի ՁՊՎ-ում պահվող անձանց անվճար սնունդ տրամադրելու համար կնքված պայմանագիրը և սննդի տրամադրման վերաբերյալ կտրոնները գտնվում են բաժնի ֆինանսական մասում՝ հաշվապահի մոտ, այդ իսկ պատճառով էլ դրանք չեն ներկայացվել դիտորդների խմբին:

Հարկ է նշել, որ վերը նշված պայմանագրերը և կտրոններն ինչպես ՀՀ ոստիկանության Երևան քաղաքի, այնպես էլ մարզային վարչությունների ենթակա ստորաբաժանումների ՁՊՎ-ներում չեն պահվում, քանի որ դրանք վերաբերվում են ֆինանսական մասերի գործունեությանը: ՁՊՎ-ների վարչակազմերը նշված փաստաթղթերի հետ առընչություն չունեն, հետևաբար չեն կարող նաև ներկայացնել դիտորդների խմբին:

2. ՁՊՎ-ի 2-րդ խցի ջրի ծորակի չգործելու պատճառն եղել է այն, որ այնտեղ պահվող ձերբակալվածը անփույթ է վարվել, ինչի հետևանքով կոտրվել է ծորակի փականի պլաստմասե ներդիրը: Նշված թերությունը ներկայումս վերացված է:

3. ՁՊՎ-ում պահվող անձանց հարազատներին հեռախոսակապի միջոցով իրազեկումները կատարվում են սահմանված կարգով, այդ մասին կազմվում է տեղեկանք և դրվում անձնական գործում: Դիտորդների խմբին նշված տեղեկանքները հնարավոր չի եղել ներկայացնել, այն պարզ պատճառով, որ անձինք տեղափոխված են եղել ՔԿՀ՝ իրենց անձնական գործերով:

Ղեկավարվելով ՀՀ կառավարության 05.06.2008թ. թիվ 574-Ն որոշմամբ հաստատված <<ՀՀ ոստիկանության համակարգում գործող ձերբակալվածներին պահելու վայրի ներքին կանոնակարգ>>-ի 14-րդ կետի պահանջներով, յուրաքանչյուր ձերբակալվածի համար ՁՊՎ-ում կազմվում է անձնական գործ՝ համաձայն N 18 ձևի, որում ներառվում են ձերբակալման և ազատման ամսաթվերը, անհատական քարտը, բերման ենթարկելու մասին արձանագրությունը, հագուստի և անձնական իրերի անվանացուցակի վերաբերյալ արձանագրությունը, նախկինում դատվածության մասին տեղեկանքը,

խուզարկության արձանագրությունը, մատնադրոշմման տվյալները, հանձնուքի, տեսակցության դիմումները, անձնական հաշվի գումարի շարժը և **ձերբակալվածին վերաբերող այլ փաստաթղթերը**:

ՀՀ կառավարության 02.04.2009թ. թիվ 351-Ն որոշմամբ հաստատված <<Ձերբակալված և կալանավորված անձանց ՀՀ կառավարությանն առընթեր ՀՀ ոստիկանության կողմից ուղեկցման և պահպանման կարգ>>-ի 51-րդ կետով սահմանվում է, որ ձերբակալված և կալանավորված անձանց ուղեկցելու դեպքում նրանց անձնական գործերը դրվում են փակ ծրարի մեջ, որին փակցվում է տեղեկանք՝ համաձայն N 3 ձևի, որում նշվում է այն վայրը, ուր ուղարկվում է ձերբակալված կամ կալանավորված անձը: Անձնական գործերը հանձնվում են ուղեկցող պահակախմբի ավագին:

Ինչ վերաբերվում է դիտորդների խմբին ներկայացված տեղեկանքում հեռախոսահամարի բացակայելուն, ապա այն Տավուշի բաժնի հերթապահ մասի ավագ տեսուչ-հերթապահ Մ.Խաչատրյանի շտապողականության և անփութության հետևանք է:

4. Դավիթ Հովհաննիսյանը Տավուշի քննչական բաժանմունքի քննիչի կողմից ձերբակալվել է 18.06.2014թ. ժամը 11.30-ին, ոստիկանության Տավուշի բաժնի ՁՊՎ-ում ազատ տեղ չլինելու պատճառով նույն քննիչի կողմից տրված որոշման համաձայն Դ.Հովհաննիսյանը տեղափոխվել է ոստիկանության Իջևանի բաժնի ՁՊՎ: 20.06.2014թ. Տավուշի մարզի ընդհանուր իրավասության դատարանի որոշմամբ Դ.Հովհաննիսյանի նկատմամբ խափանման միջոց է ընտրվել կալանավորումը: Բազմադրվագ հանցագործություններ կատարելու համար, 21.06.2014թ. քննչական գործողություններ իրականացնելու նպատակով վերջինս Իջևանի բաժնի ՁՊՎ-ից տեղափոխվել է Տավուշի բաժին: Նույն օրը Տավուշի սահմանամերձ գոտում Ադրբեջանական զինված ուժերի կողմից սկսվել է հրաձգություն, ինչի հետևանքով փակվել է Բերդ-Իջևան ավտոմայրուղին: Վերոնշյալի պատճառով հնարավոր չի եղել կալանավոր Դ.Հովհաննիսյանին տեղափոխել Իջևանի բաժնի ՁՊՎ և վերջինս պահվել է ոստիկանության Տավուշի բաժնի ՁՊՎ-ում: 23.06.2014թ. ժամը 12.25-ին Դ.Հովհաննիսյանը տեղափոխվել է ՀՀ ԱՆ <<Աբովյան>> ՔԿՀ:

5. Դ.Հովհաննիսյանը ձերբակալվելուց հետո պահվել է ոստիկանության Իջևանի բաժնի ՁՊՎ-ում, որտեղ ենթարկվել է բուժզննության և <<Ձերբակալված անձանց բուժզննության կամ բուժօգնության>> գրանցամատյանում կատարվել են համապատասխան գրառումներ: Դ.Հովհաննիսյանը բազմադրվագ հանցագործություններ կատարելու համար տեղափոխվել է Տավուշի բաժին՝ քննչական գործողություններ իրականացնելու նպատակով և Բերդ-Իջևան ավտոմայրուղին փակվելու պատճառով, ստիպված պահվել է Տավուշի բաժնի ՁՊՎ-ում, որտեղ Տավուշի բաժնի հերթապահ մասի ավագ տեսուչ-հերթապահ Մ.Խաչատրյանի կողմից կալանավորվածի մարմնի արտաքին զննություն չի իրականացվել:

6. Ձերբակալված Մ.Մխիթարյանի վերաբերյալ <<Ձերբակալված անձանց բուժզննության կամ բուժօգնության>> գրանցամատյանում մարմնի արտաքին զննություն իրականացնողի տվյալները չեն նշվել Տավուշի բաժնի հերթապահ մասի ավագ տեսուչ հերթապահ Մ.Խաչատրյանի և նույն անձին անձնական խուզարկության ենթարկելու մասին արձանագրության մեջ ժամը չի նշվել Տավուշի բաժնի հերթապահ մասի ավագ տեսուչ հերթապահ Տ.Առուշանյանի շտապողականության և անփութության հետևանքով:

Ձերբակալված Մ.Մխիթարյանի գտնվելու վայրի մասին նրա ընտրած անձին հեռախոսազանգի միջոցով տեղյակ պահելու վերաբերյալ կազմված տեղեկանքում հեռախոսահամարը չնշելու, <<Ձերբակալված անձանց բուժզննության կամ բուժօգնության>> գրանցամատյանում մարմնի արտաքին զննություն իրականացնող ոստիկանի տվյալները չնշելու, անձնական խուզարկության ենթարկելու մասին կազմված արձանագրության մեջ խուզարկության ժամը չնշելու և կալանավոր Դ.Հովհաննիսյանին Տավուշի բաժնի ՁՊՎ ընդունելու ժամանակ մարմնի արտաքին զննություն չկատարելու համար Տավուշի բաժնի հերթապահ մասի ավագ տեսուչ-հերթապահներ Մ.Խաչատրյանը և Տ.Առուշանյանը խիստ նախազգուշացվել են:

ՀՀ ոստիկանության շտաբ